ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ "ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ" ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/19

ք. Երևան _____17_____ օգոստոս 2020թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վազգեն Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն «Ի Դի Ար Սի» ՍՊԸ -ն, ի դեմս գործադիր տնօրեն Կարինե Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **"հանրային հատվածի ծրագրային բյուջետավորման ներդրման գործընթացում ներգրավված մասնագետների շարունակական մասնագիտական վերապատրաստում" հեռավար դասընթացների կազմակերպման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Օրենսդրությունե բաժնի ,Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն գինը** կազմում է **7314000 (յոթ միլիոն երեք հարյուր տասնչորս հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրին կից վճարման ժամանակացույցով (հավելված 2) նախատեսված չափերով և ամիսներին՝ ֆինանսական միջոցների տրամադրման համար սահմանված եռամսյակային համամասնություններին համապատասխան: Վճարումն իրականացվում է յուրաքանչյուր դասընթացին (30 ժամ տևողությամբ) մասնակցի մասնակցության դեպքում (եթե մասնակիցը բացակայել է, ապա հնարավորություն է տրվում լրացնել այն), փաստացի մասնակցած անձանց թիվը մեկ անձի համար սահմանված գումարով (պայմանագրի գնի 1/320-րդի չափով)բազմապատկելու միջոցով:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	Տնտեսական զարգացման և հետազոտությունների
ք. Երևան, Մ. Ադամյան 1	կենտրոն «Ի Դի Ար Սի» ՍՊԸ
ՀՎՀՀ՝ 02629081	ք. Երևան, Ռուբինյանց 28, բն. 2
Հ/Հ 900011017325	ՀՎՀՀ 01003762
ՖՆ գործառնական վարչություն	Ինեկոբանկ ՓԲԸ
ՖՆ գլխավոր քարտուղար	Հ/Հ 2050022408981001
	Գործադիր Տնօրեն՝
----------Վ. Հարությունյան	----------Կ. Հարությունյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

17

Հավելված N 1
_____ օգոստոս 2020թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/19 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ**

	Ծառայության						
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Մեկ անձի համար սահմանված գինը//ՀՀ դրամ*	առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման ժամկետը
1	79631200/2	Հանրային հատվածի ծրագրային բյուջետավորման ներդրման գործընթացում ներգրավված մասնագետների շարունակական մասնագիտական վերապատրաստումե հեռավար դասընթացների կազմակերպման ծառայություն**	դրամ	22856,25	7314000	1	Ծառայության մատուցումն իրականացվում է 2020 թվականի սեպտեմբերից մինչև դեկտեմբերի 25-ը:

*Մեկ անձի համար սահմանված գին է հանդիսանում պայմանագրի գնի 1/320-դը:

**2013 թ. ապրիլի 30-ին ՀՀ ԱԺ կողմից «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների ընդունմամբ ԾԲ ամրագրվեց որպես բյուջետավորման պարտադիր մոտեցում: 2019 թվականից բոլոր նախարարությունների և գերատեսչությունների գծով հատկացումները բյուջետային փաստաթղթերում ներկայացվեցին ծրագրային ձևաչափով: Հանրային ծախսերի կառավարման ոլորտում իրականացվող ծրագրային բյուջետավորման (այսուհետ՝ ԾԲ) վերափոխումների գծով ՀՀ պետական մարմինների բյուջետային գործընթացում ներգրավված մասնագետների կարողությունների զարգացումն ու բյուջետային գործընթացի արդյունավետության բարձրացումը ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը 2019 թվականի սեպտեմբերի 12-ին թիվ 1223-Լ որոշմամբ ընդունեց ,Ծրագրային բյուջետավորման (այսուհետ՝ ԾԲ) ամբողջական ներդրման տեսանկյունից ՀՀ պետական մարմիններում մարդկային ռեսուրսների գծով առկա կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների ծրագիրը: Ծրագրի նպատակն է հանրային ծախսերի կառավարման ոլորտում իրականացվող ԾԲ վերափոխումների գծով բյուջետային գործընթացում ներգրավված մասնագետների վերապատրաստումների մշակումն ու մատուցումը՝ ԾԲ ընդունված նոր մեթոդաբանության համապատասխան: Դասընթացը բաղկացած է 1 մոդուլից՝ 30 ժամ ընդհանուր տևողությամբ: Վերապատրաստման դասընթացները պետք է կազմակերպվեն թվով 13 խմբերի համար՝ ընդգրկելով առավելագույնը 320 հանրային հատվածի ծրագրային բյուջետավորման ներդրման գործընթացում ներգրավված մասնագետներ: Ընդ որում յուրաքանչյուր խմբում ընգրկվում է մինչև 25 մասնակից:

Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված՝ հակահամաճարակային կանոնները պահպանելու նպատակով 2020 թվականին պլանավորվում է դասընթացը կազմակերպել հեռավար տարբերակով:

Պատվիրատուն իրավունք ունի մասնակցելու դասընթացներին՝ դասախոսի կողմից դասընթացի վարման, մատուցվող նյութի և դասընթացի կազմակերպման որակը գնահատելու նպատակով:

Կազմակերպվելիք հեռավար դասընթացների ժամանակացույցը և յուրաքանչյուր խմբում ընգրկվելիք մասնակիցների ցուցակը տրամադրում է պատվիրատուն: Ընդ որում՝ Պատվիրատուն էլեկտրոնային փոստի միջոցով Կատարողին՝

- դասընթացների ժամանակացույցը տրամադրում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում.
- յուրաքանչյուր խմբում ընդգրկվելիք մասնակիցների ցուցակը (անուն, ազգանունը, հանրային հատվածի կազմակերպության անվանումը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն) տրամադրում է դասընթացը սկսելուն նախորդող մինչև երրորդ աշխատանքային օրը:

Հեռավար դասընթացներն անցկացվում են աշխատանքային օրերին:

Մինչև դասընթացի անցկացման յուրաքանչյուր օրվա ժամը 17:00-ն Կատարողը էլեկտրոնային փոստի միջոցով Պատվիրատուին է տրամադրում տվյալ օրվա հաճախումների վերաբերյալ տեղեկատվություն՝ (որը ֆիքսվում է ծրագրի միջոցով) օրը 3 անգամ, առավոտյան, կեսօրին և դասի ավարտին: Դասընթացների ավարտման օրը մասնակիցները լրացնում են էլեկտրոնային հարցաթերթիկներ հետևյալ բովանդակությամբ՝ դասավանդման որակ, թեմայի մատուցման ձև, դասընթացի կազմակերպման աշխատանքներ և այլնի գնահատում: Հարցաթերթիկի ձևը կազմում է Կատարողը՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ: Հարցումների/գնահատման արդյունքների էլեկտրոնային բազան Պատվիրատուին տրամադրվում է էլեկտրոնային փոստի միջոցով՝ մինչև տվյալ օրվա ժամը 17:00-ն:

Պայմանագիրն ուժի մեջ մտնելուն օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուի հետ համաձայնեցնում է դասավանդման ենթակա յուրաքանչյուր թեմայում ընդգրկվող ուսուցման նյութերի մանրամասները և դրանց սլայդները: Ընդ որում դասընթացի կառուցվածքում յուրաքանչյուր թեմայի առնվազն 60 տոկոսը պետք է պարունակի գործնական պարապմունք: Գործնական պարապմունքների ֆորմատը Կատարողը ևս համաձայնեցնում է Պատվիրատուի հետ: Գործնական աշխատանքները կարող են լինել ինտերակտիվ/բոլորի միաժամանակյա մասնակցությամբ, այնպես էլ անհատական առաջադրանքներ: Վերջինիս դեպքում արդյունքներն անպատճառ պետք է խմբակային քննարկվեն: Մասնակիցների կողմից կատարված գործնական/անհատական աշխատանքների էլեկտրոնային բազան ևս հիմք կհանդիսանա դասընթացի կոնկրետ օրվա համապատասխան հատվածի մասնակցության գնահատման համար:

Այսպիսով դասընթացներին մասնակիցների մասնակցության հիմնավորումը յուրաքանչյուր օրվա համար կհամարվի լիարժեք, եթե մասնակցի կողմից ապահովվի ինչպես դասախոսության ժամանակ ներկայություն, այնպես էլ մասնակցի կողմից կատարված գործնական աշխատանքի արդյունքները:

Դասընթացները կազմակերպելու համար պահանջվում է առնվազն 1 համակարգիչ՝ ինտերնետ կապի հասանելիությամբ: Դասընթացները կազմակերպելու համար անհրաժեշտ են առնվազն 2 հիմնական և 1 փոխարինող դասավանդողներ:

Յուրաքանչյուր դասընթացին (30 ժամ տևողությամբ) մասնակցի բացակայության դեպքում հնարավորություն է տրվում լրացնել այն:

ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԸ

ՀԵՌԱՎԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Դասընթացի թեմաները և տևողությունը՝

1. Ոլորտային ռազմավարությունների մշակում՝ 3 ժամ

Ուսուցման նյութը պետք է ներառի՝ ոլորտային ռազմավարությունների կապը ԾԲ համակարգի հետ, ռազմավարական նպատակների սահմանմանումը, հիմնական կատարողական (արդյունքային) ցուցանիշների սահմանումը, ոլորտային գերակայությունների սահմանումը, ծախսային գնահատականների ներկայացումը:

2. Ծրագրային բյուջետավորման ձևաչափով ծրագրերի և միջոցառումների սահմանում՝ 6 ժամ

Ուսուցման նյութը պետք է ներառի՝ ծրագրային բյուջետավորման ձևաչափով ծրագրերի և միջոցառումների սահմանում, հիմնական հասկացությունները, ծրագրային բյուջետավորումը (համառոտ ակնարկ), բյուջետային ծրագրերը, բյուջետային ծրագրերը և դրանց դերը բյուջետային գործընթացում, ծրագրերի հիմնական բաղադրիչները և դրանց ներկայացվող պահանջները (Ծրագրի անվանումը, Ծրագրի նպատակը, Ծրագրի դասիչը, Ծրագրի շահառուները, Ծրագրի արդյունքային ցուցանիշները, Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները, Ծրագրի գծով ծախսերը, Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմինը), ծրագրերի սահմանման ընդհանուր սկզբունքները, ծրագրի միջոցառումները, ծրագրի միջոցառումները և դրանց դերը բյուջետային գործընթացում, ծրագրի միջոցառումների սահմանման ընդհանուր սկզբունքները, ծրագրի միջոցառումների տեսակները և դրանց առանձնահատկությունները (Ծառայությունների մատուցման միջոցառումները և դրանց առանձնահատկությունները, Տրանսֆերտների տրամադրման միջոցառումները և դրանց առանձնահատկությունները, Հանրային սեփականության կառավարման միջոցառումները և դրանց առանձնահատկությունները, Հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների հետ կապված միջոցառումները և դրանց առանձնահատկությունները, Ֆինանսավորման հոսքերին առնչվող միջոցառումները և դրանց առանձնահատկությունները, Ֆինանսավորման ծախսերին առնչվող միջոցառումներ) վարչական բնույթի ծրագրերն ու միջոցառումները, արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի և միջոցառումների սահմանման առանձնահատկությունները, ծրագրերի և միջոցառումների ձևավորման և ներկայացման գործընթացը (տեխնիկական հարցեր, ծրագրի անձնագիրը:

3. Ծրագրային բյուջետավորման ձևաչափով ծրագրերի և միջոցառումների համար արդյունքային ցուցանիշների սահմանում՝ 5 ժամ

Ուսուցման նյութը պետք է պարունակի՝ ծրագրային բյուջետավորման ձեվաչափով ծրագրերի և միջոցառումների համար արդյունքային ցուցանիշների սահմանում՝ հիմնական հասկացությունները, ոչ ֆինանսական արդյունքները և դրանք բնութագրող ցուցանիշները (Ծառայությունների գծով ոչ ֆինանսական ցուցանիշները, քանակի ցուցանիշներ, ծածկույթի ցուցանիշներ, որակի ցուցանիշներ, ժամկետի ցուցանիշներ, վերջնական արդյունքի (նպատակի) ցուցանիշներ, ուղղակի և վերջնական արդյունքի ցուցանիշների հիմնական տարբերությունը), ոչ ֆինանսական արդյունքների սահմանման սկզբունքները (վերջնական արդյունքի ցուցանիշներ, ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև ոչ ֆինանսական արդյունքների ցուցանիշների սահմանումը, արդյունքների ցուցանիշների ընտրության գործընթացը, համապարփակ, իմաստալից և օգտակար, արտաքին ուղղվածություն, հստակ և միանշանակ կերպով սահմանված, չափելի և ստուգելի, վերահսկելի, իրատեսական և իրագործելի, համեմատելի, պատշաճ վարքագիծ խրախուսող, սահմանափակումները հաշվի առնող):

4. Բյուջետային ծրագրերի ծախսակազմում՝ 4 ժամ

Ուսուցման նյութը պետք է պարունակի՝ ծախսակազմման գործընթացի ընդհանուր նկարագրությունը, ծախսակազմման նպատակների սահմանումը, ծախսերի օբյեկտի սահմանումը, համապատասխան ռեսուրսների/ծախսերի բացահայտումը և դասակարգումը (ծախսերի օբյեկտին առնչվող ծախսերի բացահայտումը, ծախսերի դասակարգումը, ծախսերի դասակարգումն ըստ ծախսային տարրերի/ռեսուրսների, ծախսերի դասակարգումն ըստ ծախսերի բնույթի, ծախսերի դասակարգումն ըստ ծախսերի վարքագծի), ծախսերի վերագրումը (ծախսերի ուղղակի վերագրումը, ծախսերի վերագրումը բաշխումների միջոցով, բաշխման հիմքը, ծախսերի վերագրման գործընթացի նկարագրությունը, գործնական նկատառումներ ծախսերի բաշխումների կիրառության վերաբերյալ, ստանդարտ ծախսերը, սահմանային ծախսերը, հաշվարկների իրականացումը և արդյունքների ստուգումը), բյուջետավորման փուլում ծախսակազմման հետ կապված այլ հարցեր (աճողական բյուջետավորում, ոչ աճողական բյուջետավորում):

5. ՀՀ ԱԺ, ՀՀ կառավարության և ՀՀ պետական մարմինների կողմից ծրագրային բյուջետավորման ձևաչափով պաշտոնապես հաստատվող և հրապարակվող բյուջետային փաստաթղթերի ձեվաչափերը և դրանցում տեղեկատվության ներկայացման պահանջները՝ 3 ժամ

Ուսուցման նյութը պետք է պարունակի՝ Բյուջետավորման գործընթացի հիմնական դերակատարները, Պաշտոնապես հաստատվող և հրապարակվող բյուջետային փաստաթղթերը ԾԲ համատեքստում, ՀՀ ԱԺ կողմից պաշտոնապես հաստատվող և/կամ հրապարակվող բյուջետային փաստաթղթեր (Պետական բյուջեի մասին օրենքի նախագիծ, ՀՀ կառավարության բյուջետային ուղերձը, ՀՀ կառավարության կողմից պաշտոնապես հաստատվող և հրապարակվող բյուջետային փաստաթղթեր, Բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության որոշումը):

6. Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և պետական բյուջեի նախագծերի մշակման շրջանակներում պետական մարմինների բյուջետային հայտերի կազմման և դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման մեթոդական ցուցումներ, քաղաքացու բյուջե՝ 9 ժամ

Ուսուցման նյութը պետք է պարունակի՝ ՄԺԾԾ և ՀՀ պետական բյուջեի կազմման գործընթացին վերաբերող ընդհանուր տեղեկատվություն (ՄԺԾԾ որոշումները, ՄԺԾԾ որոշումներ կայացնողները, բյուջետային գործընթացի ժամանակացույցի ամփոփ նկարագիրը, պետական մարմիններին ներկայացվող հիմնական պահանջները և առանցքային ժամկետները, հատուկ ցուցումներ և օրենսդրական հիմքեր՝ բյուջետային ծախսերի հաշվարկների կատարման համար), ՄԺԾԾ հայտերի կազմման ցուցումներ, բյուջեի ֆինանսավորման հայտի կազմման ցուցումներ, ՄԺԾԾ և տարեկան բյուջեի հայտերի կազմման ցուցումների հավելվածներ, գործնական օրինակներ՝ վերջնական արդյունքի չափորոշիչների և ցուցանիշների ներկայացման ձևաչափի լրացման, ուղղակի արդյունքի չափորոշիչների և ցուցանիշների ներկայացման ձևաչափի լրացման և ԾԲ հայտերի լրացման վերաբերյալ, քաղաքացու բյուջե:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն ք. Երևան, Մ. Ադամյան 1 ՀՎՀՀ՝ 02629081 Հ/Հ 900011017325 ՖՆ գործառնական վարչություն ՖՆ գլխավոր քարտուղար	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն «Ի Դի Էր Սի» ՍՊԸ ք. Երևան, Ռուբինյանց 28, բն. 2 ՀՎՀՀ 01003762 Ինեկոբանկ ՓԲԸ Հ/Հ 2050022408981001 Գործադիր Տնօրեն՝
----------Վ. Հարությունյան (ստորագրություն)	----------Կ. Հարությունյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ

17 դեկտեմբերի

Հավելված N 2
2020թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/19 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79631200/2	Հանրային հատվածի ծրագրային բյուջետավորման ներդրման գործընթացում ներգրավված մասնագետների շարունակական մասնագիտական վերապատրաստում հեռավար դասընթացների կազմակերպման ծառայություն									2194200	5119800	7314000	7314000	7314000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011017325
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար

----------Կ. Հարությունյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Տնտեսական զարգացման և հետազոտությունների
կենտրոն «Ի Դի Ար Սի» ՍՊԸ
«Ի Դի Ար Սի» ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց 28, բն. 2
ՀՎՀՀ 01003762
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022408981001
Գործադիր Տնօրեն՝

----------Կ. Հարությունյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
17 օգոստոսի 2020 թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/19 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____ «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « « 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
2020թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/19 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն